



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 35 ՏԱՐԻՆ

«Որպես փյունիկ, կրակից կելնես, կելնես ճար»

Դեղեցկությամբ ու փառօրվ վառ ու լուսավոր»:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ



այ ժողովրդի պատմության մեջ անմոռանալի տարեթիվ է 1920 թվականի նոյեմբերի 29-ը, ոսկեդեմ տառերով գրված ամեն մի հայի սրտում:

Այստեղ է վերջանում հայի մոռյլ ու աշխուժող անցյալը և սկսում լուսաշող ներկան, մահվան եզրին հասած, անօգնական, դարերով տրոհված հայ ժողովուրդը ռափ կանգնեց ուս մեծ և ազնիվ ժողովրդի հղբայրական օգնությամբ, ընդմիջող բոքափելու դարերի ստրկության փոշին, փշրելու դարավոր ազատագրության շղթան և նվաճելու իրեն համար ազատ իրավունք, պետականություն և Հայրենիք:

Իր ամբողջ պատմության ընթացքում զբոյ հուր և ընդ ջուր» անցնելով ապրել է հայ ժողովուրդը: Նա երկու անխոցելի զենք ուներ իր թշնամիների դեմ. մեկը նրա մարտնչող ոգին էր, մյուսը՝ իր հազարամյա մշակույթը, իր գիրն ու գրականությունը, իր հոգեկան գանձերը, որոնք նա դարձրել էր իր համար անհաղթելի զենք, պողպատյա վահան՝ գոյության իր երկարատև պայքարում:

Հնուց անտի հայր եղել է հին աշխարհի կուլտուրական ժողովուրդներից մեկը:

Դարերի ու հազարամյակների խորքերից մեզ են հասել հայկական կլասիկ ճարտարապետության լավագույն նմուշներ՝ Բանդակազարդ ու հույակապ հին վանքեր, պալատներ, բերդեր ու մամուսպատ ավերակների նկարագրող այլոներ ու խոյակներ:

յոթներանգ ծաղիկների գույնով ու բույրով հրաշագարոված հազարավոր ձեռագրեր:

Անցյալում հայ ժողովրդի ապրած տառապանքներն ու ողբերգությունը չի ապրել աշխարհում և ոչ մի ժողովուրդ: Ո՛չ մի բռնակալ, ո՛չ մի բարբարոս չեն կարողացել նվաճել ու բնկնել հայ ժողովրդի հայրենասիրական ոգին, պայծառ հիշատակը իր լավագույն ապագայի նկատմամբ: Դիմացել է նա, կուրծք է տվել դարերի արհամիտներին և հասել այսօրվա լուսապայծառ ներկային, մի ձեռքով զոր կայծակին» պաշտպանել է իր Հայրենի տունն ու պատիվը, մյուսում՝ մշակույթի զենքերը, հերկել է իր հողը, կերել է իր արդար հացը, ստեղծել է իր հույակապ մշակույթը, արվեստի Հրաշալիքները, զարգացրել իր մեծաստեղծ լեզուն:

1920 թվականին անդնդի եզրին էր հասել մեր ժողովուրդը: Աղքատության, սովի, մահվան մոռյլ ուրվականը սավառնում էր ողջ երկրի վրա: Ընդհանուր աղետը, հայ ժողովրդի գոյության սպառնացող մեծ վտանգը առաջ էր բերել ամբողջ երկրում ընդհանուր վրդովմունք ու զայրույթ: Հայ ժողովուրդը բարձրացրեց ապստամբության ազատարար դրոշմ: Նա իր փրկությունը տեսնում էր Հայաստանում սովետական կարգերի հաստատման մեջ: Նվաճեց, հայ ժողովրդի համար մոռյլ ու նակատագրական այդ օրերին, օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդի բարեկամ և ազատարար ուս ազնիվ ժողովուրդը: Հնչել էր հայ ժողովրդի ազատության ու փրկության ժամը:

նույնները ումի կանգնեցրեց հայ ժողովրդին: Արյունախած հայ հոգու և հայ հողի վրա ծագեց մի նոր ու պայծառ առավառ: Սովետական Հայաստանը հանդիսացավ հայ ժողովրդի երազների, դարավոր տառապանքների լուսավոր ու վերջնական հանգրվանը, մեր Ավետյաց երկիրը:

Մեր երկիրը ում դրեց ազգային-հաղափական, մշակութային վերածնության միակ ու փրկարար ուղու վրա: Անցնող 35 տարիների ընթացքում կառուցվեցին նոր հաղափներ, ամենուրեք բարձրացան հսկա արդյունաբերական գործարաններ, ֆաբրիկաներ, անց կացվեցին ստորերկրյա տուններ, ռոդգիշ ջրանցքների կենսատու օդակներով պատվեց երկիրը: Ամբողջ երկիրը պատվեց հիդրոէլեկտրակայանների խիտ ցանցով, գեղածածկ կապույտ Սևանից մինչև Ղափանի պղնձով հարուստ լեռները, Արարատյան դաշտավայրից մինչև Արագածի ծաղկավետ լանջերը շողացին էլեկտրական լամպեր, ու գիշերը ցերեկ դարձավ: Հոսեց պղնձալարերով էլեկտրոնների հոսքը, ինչպես մարդու երակներով արյունը, հորեղացին գործարանների մեքենաներն ու եսթարակները, փուկերն ու պտուտակները նույնացին, երգելով նոր օրերի նոր երգը:

Հայ գյուղը հիմնովին վերափոխվեց: Հայ գյուղացին զարթեց իր դարավոր թմբիրից, դուրս եկավ Քսենոֆոնյան իր գետնափոր խրճիթներից ու լիարժեք շենքեց ազատությունը: Հնադարյան արտոն ու գուրանը իրենց տեղը գտան քանդարաններում ու հայրենական մեր դաշտերում հոնդացին տրակտորներն ու կոմբայները: Միացին արտերը ուրախության անհուն, անսահման ծփանքներով:

Հոկտեմբերի շնչով և գաղափարով վերածնված հայ ժողովուրդը տիրացավ հաղափական ու տնտեսական այդ ազատության: Հայրենի իր հողերի վրա հայ ժողովուրդը 35 տարուց ի վեր իր ստեղծագործ աշխատանքով ու հանճարով ժայռերից վարդեր է փառել, փառերը վերափոխել է հացի, լույսի, կյանքի: Այսօր հայ ժողովուրդը աերն է իր հողին, հացին, պատվին: Մոխիրների տակից հարյավ ոգին որք հայ ժողովրդի:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 35 տարիներին իսպառ վերացվեց անգրագիտությունը, տարրական և միջնակարգ դպրոցների լայն ցանց ստեղծվեց երկրում: Լուսավորությունը քափան-

ցեց թե՛ գյուղ, թե՛ ֆաղափ: Երեանք դարձավ գիտության, կուլտուրայի օջախ: Գիտությունների՝ ակադեմիա, համալսարան, ինստիտուտներ, տեխնիկումներ, գրադարաններ, քառոններ, օպերա, քանդաաններ և այլ կրթական հաստատություններ իրենց պատվավոր տեղերը գրավեցին մայրահաղափում: Երբեմնի հողաշեն Երեանք կերպարանափոխվեց, գեղեցկացավ: Ո՛րքան հայրենակարոտ հոգիներ կուզեային տեսնել գեր մի անգամ մեր գեղեցիկ Երեանք: Հայրենի յուրահանչյուր քիզ հողի ու ֆառի վրա հայ ժողովրդի մեռնաբույր ձեռքի շնորհն ու շերմությունը կա:

Միայն սովետական իշխանության հաստատումից հետո էր, որ հայ ժողովուրդը խաղաղ ու շեն իր Հայրենիքում կարողացավ իր հոգեկան ուժերի զարգացման լայն հնարավորություններ ապա: Նոր ու հզոր քափով իր վերեքն ապրեց հայ մշակույթը: Մի կարն ժամանակամիջոց, զարգանալու, անելու մի խաղաղիկ պահ, և ահա հառնեց մոխիրների տակից, որպես փյունիկ, ներսս հայ ժողովուրդը:

Հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի հոգում երբեք չի հանգել ազատության անշեշ ծարավը և հայրենասիրության բոցավառ զգացմունքը: Եվ հոկտեմբերի 29-ը այդ երկու զգացմունքների ամենաշեղ արտահայտությունը հանդիսացավ:

Իր ազգային մեծ տունի առթիվ երախտագետ հայ ժողովուրդը անկեղծ հարգանքի խորը երախտագիտության շերմ խոսք ունի իր ավագ եղբոր՝ ռուս մեծ ու հերոսական ժողովրդի նկատմամբ: Հայ ժողովուրդը ունի մի անկեղծ ու անշահախնդիր բարեկամ, դա ռուս ժողովուրդն է:

Ցեծություն է այսօր ամեն հայ հայրենասեր մարդու հոգում: 35 տարի է, ինչ ահա հայ ժողովուրդը իր հայրենի հողի վրա մարմին է տալիս իր լուսակերտ երազներին: Անցնող յուրահանչյուր տարի հաղթության, երջանկության նոր գարուններ է բերում մեր երկրին և մեր ժողովրդին:

Այսօր պայծառ է հայ ժողովրդի ներկան, ավելի՛ ևս հուսալից՝ նրա ապագան: Այսօր, իր ազատության ու անկախության փառապանծ տունի առթիվ, հայ ժողովուրդն օրհներգում է այն փրկարար ճախախնամական ձեռքը, որը ճանապարհ է բացել իրեն համար դեպի նոր կյանք ու արևաշող ապագա:

Փա՛նք վերածնված հայ ժողովրդին:

